«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ « Կոմիտասը՝որպես հայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր»
Առարկան՝ Երաժշտություն

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Թամազյան

Ուսումնական հաստատություն՝ «Երևանի հ.45 հիմն. դպրոց»ՊՈԱԿ

Թեման՝ **<<Կոմիտասը, որպես հայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր>>**

Հարց՝ **Որո՞նք են Կոմիտասի ստեղծագործական գործունեության հիմնական դրույթները:**

Բովանդակություն՝

Ներածություն ---------- 3

Կոմիտասը որպես հայ դասական երաժշտության հիմնադիր ---------- 4

Եզրակացություն ---------- 13

Օգտագործված գրականության ցանկ ---------- 14

Ներածություն՝ Այս ուսումնասիրության նպատակն է վեր հանել Կոմիտասի դերն ու նշանակությունը հայ երաժշտության պատմության մեջ: Այսօր տակավին անհնար է սպառիչ խոսք ասել կոմպոզիտորի երաժշտական ժառանգության մասին, որովհետև դեռևս լիարժեք ուսումնասիրված չէ արվեստագետի արխիվը:

Հետազոտության աշխատանքը գրելիս հաշվի են առնվել նրա տեսական-քննադատական ուսումնասիրությունները:Կոմիտասի երաժշտական դիմագիծը ուսումնասիրողները կապում են գլխավորապես նրա հիմնական գործունեության՝ ժողովրդական երգերի հավաքման և մշակման հետ: Նրա գործը ժողովրդական երգերի մշակման դասական օրինակ դարձավ և որպես կարևոր արժեք մնաց պատմության մեջ՝ մինչ այսօր պահպանելով իր արդիականությունը և գրավելով շատ հետազոտողների:

Հետազոտության նպատակը: Սույն հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել Կոմիտաս վարդապետի մանակավարժական հայացքների արդիականությունը:

Հետազոտության խնդիրները: Հետազտության նպատակից բխել են հետևյալ խնդիրները՝

1. Ուսումնասիրել և վերլուծել թեմայի վերաբերյալ համապատասխան գրականություն: 2. Վերլուծել Կոմիտասի մանկավարժական հայացքները:

3. Պարզել Կոմիտաս վարդապետի մանկավարժական հայացքների նշանակությունը իր ժամանակի և արդի երաժշտական կրթության զարգացման մեջ:

ԿՈՄԻՏԱՍԸ,ՈՐՊԵՍ ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԴԻՐ

Հազար ութ հարյուր վաթսունինն թվին

Հայոց այգիներն ի՞նչ պտուղ տվին

Հայոց արտերում ի՞նչ բերք էր հասել,-

-Դժվար է ասել:

Կոմպոզիտոր,ազգագրագետ,գիտնական,մանկավարժ,խմբավար,երգիչ,հասարակական հզոր եռանդի տեր արվեստագետ Կոմիտասը շրջադարձային դեր խաղաց հայ երաժշտական մշակույթի զարգացման գործում:Նա դարձավ ազգային վերածննդի դարաշրջանի գեղարվեստական գաղափարների կուտակողը: Բազմակողմանի ուսումնասիրելով հայ երաժշտությունը՝ նա առաջ քաշեց հայ երաժշտության ինքնուրույնության թեզը,իր բազմաբնույթ գործունեությամբ հիմնադրեց հայկական ազգային դասական երաժշտությունը և կանխանշեց նրա հետագա զարգացման ուղիները:Կոմիտասն առաջինն էր,որ հայտնաբերեց ազգային արվեստի ակունքները,գիտականորեն հետազոտեց և բացահայտեց հայ երաժշտության ինքնատիպության օրինաչափությունները:

Կոմիտասը հայ գեղջուկի ստեղծագործությունը բնորոշեց որպես ազգի հոգևոր հարստությունների շտեմարան և հոգատարությամբ հավաքեց հայ գեղջուկի երգերը,մշակեց և իր ոգեշունչ կատարմամբ խթանեց ազգային հոգևոր արժեքները տարածումն ու ճանաչումը:

Հայ ժողովրդի գանձարանի հարստությունն արժեքավորող Կոմիտասը ավանդապահ էր: Իր ժամանակի մտավորականներ Հ.Թումանյանը, Ավ.Իսահակյանը, Մ.Աբեղյանը,Ա. Չոպանյանը, Փ.Թերլեմեզյանը ոգեշնչում էին Կրմիտասին, քաջալերում նրան ստեղծագործական որոնումնորում: Կոմիտասի արվեստը գրավեց նաև օտարազգի խոշորոգույն երաժիշտներին՝Կ.Դեբյուսիին և Կ.Սեն-Սանսին, ստեղծագործական

նվաճումները բարձր գնահատեցին Գնեսինը,Փլայշերը, Օբրին,գերմանացի, ֆրանսիացի, շվեյցարացի, ավստրիացի արվեստասերները:

Գևոն չթողեց որդուն ապարանք

Ոչ էլ Թագուհին թողել էր գանձեր,

Բայց ինչ ունեին-չունեին նրանք՝

Իրենց որբացած որդուն էր անցել:

Իսկ ի՞նչ ունեին:Լոկ ձայն կլկլան.-

Կոմիտասի կյանքի ու գործի իրական արժեքավորումը հինմականում կապված է հետպատերազմյան շրջանի հետ: Խոշոր կոմիտասագետ Ռ.Աթայանից տասնյակ տարիների քրտնաջան, մանրազնին ու բազմակողմանի աշխատանք պահանջվեց:Արվեստագետի կերպարը ոգեշնչեց բանաստեղծներին քանդակագործներին ու նկարիչներին:Բանաստեղծական հզոր ներշնչանքով կյանք ստացավ Պ.Սևակի «Անլռելի զանգակատունը»: Բազմաթիվ ու բազմաբնույթ ստեղծագործություններում հնչեցին Կոմիտասի ձայնագրած մեղեդիները:Հայ երաժիշտների մի քանի սերունդ որդեգրեց նրա գեղարվեստական սկզբունքները,համարձակորեն ընդլայնեց նրա նշագծած ուղիները:

ՈՒթսունմեկ թիվ:

Վաղարշապատ:Էջմիածին

Սակայն նրան

Ով կընդունի,այն էլ...որտե~ղ-

Մի հոգևոր ուսումնարան,

Որի սանը մի օր պիտի

Հագնի սքեմ վարդապետի

Եվ նա սկսեց...թուրքերեն երգել:

Մանկական ձայնը՝ սկզբում կերկեր,

Վայրկյաններ հետո ինքն իրեն գտավ,

Հունի մեջ մտավ

ՈՒ գնա~ց- գնա~ց:

Առաջին անգամ,առաջին անգամ

Ա՛ստ՝ Վեհարանի հին պատերի մեջ,

Սրբապղծորեն թուրք երգ է մխում...

«Կոմիտաս վարդապետը,որքան գիտենք, միակն է ճեմարանի սաներից,որ արհամարհելով աստվածաբանությունը և ընտրելով երաժշտությունը, այսօր,իր ֆարաջայի շնորհիվ մուտք գործելով չոր ու ցամաք աստվածաբանության և գրաբարի մենաստանը,կենդանի երգ,ժողովրդական լե,լե սիրտ ու զգացմունք է ներշնչում ճեմարանի սաների մեջ»:

Խրախուսանքի ջերմ խոսքերին հակադրվում է հետադիմական պարբերականը.«Հ.Կոմիտասը աշակերտության համերգ է սարքում, էլ դես ու դեն չկայ,վերոհիշյալ ժողովրդական երգերի թիվը կրկնապատկում, իսկ շատ անգամ էլ եռապատկում է,և ահա ձեզ հայկական կրնցերտ վեղարավոր կրմպոզիտորի»:Կոմիտասի գործունեությունը սահմանափակելու բոլոր փորձերը ապարդյուն էին:1905-1907թ. ընթացքում նա դասախոսություններով ու համերգներով հանդես է գալիս Անդրկովկասի և Արևմտյան Եվրոպայի քաղաքներում (Թիֆլիս,Փարիզ,Բեռն,Լոզան,Ժնև):Այդ շրջագայությունները նպատակ ունեին հասարակությանը ծանոթացնել հայ ժողովրդական երաժշտությանը և այդ ասպարեզում կատարած ուսումնասիրություններին:Իր դասախոսությունները ուղեկցում էր ժողովրդական երգերի ոգեշունչ մեկնաբանմամբ:Կատարում էր քնարական,աշխատանքային, ծիսական և այլ երգեր,ղեկավարում էր իր կազմակերպած երգչախմբերը, որոնց մասնակից էր դառնում տեղի հայ

երիտասարդությունը:Կոմիտասի ստեղծագործությունը, որ գլխավորապես վոկալ՝մեներգային և խմբերգային է, բաժանվում է երկու հատվածի՝ ժողովրդական կամ հոգևոր սկզբնաղբյուրի վրա հիմնված է բուն հեղինակային գործեր (<Առ գետս Բաբելոցուց> սաղմոսը, Հ.Պարոնյանի խոսքերով՝ քաղաքավարության վնասեր> երաժշտական պատկերները, Հ.Հովհաննիսյանի խոսքերով՝ <Ուր ես գալի, այ՝ գարուն> կանտատը, Թումանյանի խոսքերով՝ <Մութն էր երկինքը> ռոմանսը, <Կաքավի երգը> և այլն):

1.(Ա_դո,Նամակ Երևանից,«Մշակ» 1903թիվ96)

2«Նոր-Դար»,1903,թիվ110

Կոմիտասն առավել կարևորել է ժողովրդական սկզբնաղբյուրի հիմնված երկերը (<Գարուն ա><Քելեր, ցոլեր><Լոռվա գութաներգ>, <Ծիրանի ծառ>, <Անտունի>, <Լուսնակն անուշ>և այլն), որոնցում զգացվում է ժողովրդական նյութի նկատմաբ Կոմիտասի անհատականության զորեղ ներգործությունը ներդաշնակության, մասնավորապես բազմաձայնության բացառիկ ինքնատիպ և ժամանակի նորագույն միջոցների ու հնարքների վարպետ կիրառումը, ժողովրդական երաժշտության և ժամանակակից եվրոպական կոմպոզիցիոն միջոցների խելամիտ համադրումը: Կոմիտասի ստեղծագործությունը լայն հեռանկարներ բացեց ազգային երաժշտարվեստի զարգացման գործում, նկատելի ազդեցություն ունեցավ արևելյան այլ ժողովուրդների երաժշտության զարգացման վրա:

Արտասահմանյան շրջագայություններին հաջորդող տարիներին հետադիմանակն կղերականությունը էջմիածնում ծանր կացություն ստեղծեց երաժշտի համար: Նրա գրած նամակից տեղեկանում ենք <.... Ոչ խելք են թողել, ոչ միտք, անհանգիստ բան եմ եղել հոգիս բերանս է հասել. Երևակայիր, որ շրջապատված եմ թանձր մառախուղով, ուզում եմ լույս, պայծառ լույս տեսնել, հեռանալ վեր, շատ վեր այրող արևի հետ ապրել, բայց ճանապարհ չեմ գտնում, անիրավ օդի մեջ խեղդամահ եմ լինում: Մարդ չկա որին բանաս

սիրտդ, մարդ չկա որից մի բան լսես... Ես զարմանում եմ, թե ինչու մինչև այժմ չեմ խելագարվելլ այս մթնոլորտի խարդախ վայրերում:>

Հետևում է տարին տարուն,միտքը՝ մտքին,

Հետևում է դեռ նոր գտած ելքը մուտքին:

Ապրում է նա աչքը ՝ գրքին,

ՈՒշքը ՝երգին:

Ե՛րգ և ուսու՛մ,

Շարակնոցներ ու մանրուսու՛մ...

1«Ով ով է:Հայեր»հանրագիտարան,հ.1,հրատ.Երևան2007,էջ569-570,գլխ.խմբ. Հովհ.Այվազյան

2.Մարգարիտ Բաբայան-երգչուհի,դաշնակահարուհի,Կոմիտասի բարեկամներից:

ԵՎ որտեղ երգն էր՝

Այնտեղ էլ նա էր...

Երգով է ուրախ,

Երգով է տխուր,

Երգով է վառվում,երգով է մխում.

Վաղուց ի վեր երազելով երաժշտանոց ստեղծել հայ երիտասարդության համար՝ Կոմիտասը հույս էր տածում իրականացնել այն Պոլսում:Նրա ծրագրին համաձայն երաժշտանոցը պետք է ծառայեր հետևյալ նպատակներին.

1.ՈՒսումնասիրել հայկական և եվրոպական երաժշտությունը:

2.ՈՒնենալ ձայնական ու գործիքային դասարաններ:

3.Կազմակերպել զեկուցումներ երաժշտական խնդիրների շուրջ:

4.Հիմք դնել երաժշտական հրատարակության:

5.ՈՒնենալ մշտական երգչախումբ:

Նա հիմնադրեց 300 հոգուց բաղկացած «Գուսան»երգչախումբը և սկսեց համերգային շրջագայությունները Պոլսում,Իզմիրում,Եգիպտոսի քաղաքներում :Խմբավարական և մանկավարժական գործունեության հետ մեկտեղ Կոմիտասը շատ ժամանակ և եռանդ էր հատկացնում ստեղծագործական աշխատանքին,շարունակում խազերի վերծանման գործը:Ժողովրդական երգերի գրառման նպատակով 1913թ.ամռանը Կոմիտասը գնաց Էջմիածին:1914թ.հունվարին Պոլսում Կոմիտասին այցելեց Մ.Ֆ.Գնեսինը,որը երաժշտին նվիրված իր հուշերում գրել է.«Կոմիտասն ինձ վրա թողեց կատարյալ աշխարհիկ մարդու տպավորություն:Նա շատ լավ է խոսում ռուսերեն:...Զրուցելով Կոմիտասի հետ,ես զգում էի և՛գիտական կենտրոնացման լրջությունը,և՛մարդկային հմայքի բարյացկամությունը:Միայն ավելի ուշ ծանոթանալով Կոմիտասի ստեղծագործություններին՝ ես համոզվեցի,որքան մեծ էր նրա տաղանդը,ինչ նշանավոր կոմպոզիտոր էր նա,ինչ հետաքրքիր և ինքնատիպ վարպետ և որքան մեծ էր նրա դերը XIXդ. հայ երաժշտության զարգացման գործում:Որքան թանկ է ինձ համար խոստովանել, որ ես եղել եմ այն փոքրաթիվ ժամանակակիցներից մեկը,որն անձամբ ճանաչել է հայ երաժշտության մեծ սկզբնադիրներից մեկին»: 1914թ. Կոմիտասը ,20 այլ երկրների երաժշտական մշակույթի գործիչների հետ , մասնակցեց Փարիզում կայացած Միջազգային երաժշտական ընկերության կոնգրեսին:Նա հանդես եկավ երկու զեկուցումով՝

1.«Հայ գեղջուկ երաժշտությունը»:

2.«Հին և նոր նոտագրությունը հայկական հոգևոր երաժշտության մեջ»:

Գարուն է,գարուն՛,

Բայց մարդասպանին դա չի խանգարում:

Դա չի խանգարում,

Որ արյամբ հորդի հայկական առուն,

Որ դիակներից քարափն անհատակ

Իր պռունկներով գա հավասարվի...

Թե մինչև հիմա որտեղ երգն էր՝

Այնտեղ էլ նա էր,

Այսուհետ արդեն որտեղ որ նա էր՝

Այնտեղ էր երգը:

Առաջին անգամ լայն դահլիճների

Բեմից էր լսում ինքն իրեն հայը,

Եվ բոլորովին ուրիշ էր հնչում

Իր իսկ «Տույ-տույ»-ը,

«Վայ-լե-լե-վայ»-ը

Փարիզյան կոնգրեսում Կոմիտասի ելույթը նրա վերջին հրապարակային ելույթներից էր:«Հայն ունի ինքնուրույն երաժշտություն...Յուրաքանչյուր ազգի երաժշտությունն իր ազգի հնչական ելևէջներեն կծնի ու կծավալվի:Հայ լեզուն ունի իր հատուկ հնարավորությունը, ուրեմն իր համապատասխանող երաժշտությունը»:«Հայ երաժշտությունն իր մեջ կսնուցե ոգին իր իսկ ցեղին, որովհետև երաժշտությունն ամենեն մաքուր հայելին է ցեղին»:

Կոմիտաս

Կոմիտասի գեղագիտական հայացքները կյանքի էին կոչված ազգային հոգեբանությամբ, աշխարհըմբռնմամբ, ազգի պատմական, ինքնահաստատման և ինքնաճանաչման միտումով: Կոմիտասին հոգեհարազատ էին դարաշրջանի առաջադեմ գաղափարները, հասարակական կյանքում արվեստի տեղի ու դերի, արվեստի ազգային ինքնատիպության ու ժողովրդականության հարցերը: Ժողովրդական-

գեղջկական երաժշտությունն է Կոմիտասը համարել հայ երաժշտության միակ արժեքավոր և ինքնուրույն ճյուղը: Նա գեղջկական երաժշտության բացառիկ արժեքների ճանաչմամբ նպատակ ուներ հայ երաժշտությունը պահպանել օտարամուտ ազդեցություններից: Դարաշրջանի հուզող խնդիրներից մեկը հայ երաժշտության ազգային ինքնուրույնության, նրա ինքնատիպության բնորոշումն էր և այս հարցը Կոմիտասի գեղագիտական հայացքների անկյունաքարն էր:

Զարմանալի խորաթափանցությամբ նա ազգի հոգևոր կյանքի ճշմարտացի արտացոլումն է համարել ժողովրդական երաժշտությունը, քանի որ գեղջուկի համար երգաստեղծությունը նույնքան բնական երևույթ է, որքան խոսակցական լեզուն: Գյուղացուն հետաքրքրում էր երգը, և ոչ թե երգի հեղինակը, որն այսօր կարող է լինել ինքը, իսկ վաղը՝ մեկ ուրիշը: <<Գյուղում ամենքն էլ լավ կամ վատ երգել գիտեն, որովհետև մասնակից են երգաստեղծության կամ երգասացության: Բայց և ոչ մեկը գիտե, թե ով է կապել խաղը, որովհետև բոլորը միասին են հյուսում>>:

Գրի առնելով մեծ տարածության վրա սփռված արևելահայերի և արևմտահայերի երգն ու երաժշտությունը տարբեր պատմաշրջաններում ստեղծված ժանրային տեսակներն ու դրանց տարբերակները Կոմիտասը ընդգծեց ժողովրդական ստեղծագործության հորիզոնական (տարածքային) և ուղղահայաց (ժամանակային) կտրվածքը: Նա լսեց այն, ինչ լսելի է ընտրյալներին, լսելի դարձրեց բնության շշունջն ու շնչառությունը, գյուղացու հույզերը:

Ժողովրդական երգերի հավաքելը Կոմիտասը սկսել է Էջմիածնում, ուսման տարիներին և առաջին ձեռագիր ժողովածուն ամբողջացրել է 1891 թվականին:

Վերջին գրառումները իրականացրել է 1913 թվականին: Ժողովրդական երգերի հավաքումը իրականացրել է հայկական նոտագրությամբ:

Նրա ջանքերով մեզ են հասել միջնադարի գեղարվեստական այնպիսի փայլուն վկայություններ, ինչպիսիք են Գր. Նարեկացու տաղերը, <<Մոկաց Միրզան>>, <<Սասունցի Դավիթ>> դյուցազներգության երգվող հատվածները:

Կոմիտասի ազգագրական գործունեության կարևոր արդյունքներից է Ակնա երգերի շարքը, որը ուշ շրջանի գուսանական արվեստի ժառանգություն է:Այն իր բովանդակությամբ, ոճաձևերով, բարդ ելևէջներով զգալիորեն տարբերվում է նույն շրջանի գեղջկական երգերից:Երաժշտի գրառումներում էական տեղ են գրավում քնարական, ծիսական և հարսանեկան, աշխատանքային երգերը: Աշխատանքային երգերում լոկ աշխատանք չի ցուցադրվում: Արտահայտում է գյուղացու հույզերն ու ապրումները, նրա դարավոր կենսափորձը. <<Ձիգ տու քաշի>>, <<Սայլի, կալի, խուրձ կրելու հորովելը>>, <<Լոռվա գութաներգը>>:

Ժողովրդական երգերի ինքնատիպ նկարագրի մեջ առաջնային նշանակություն ունեն խոսքի ելևէջներից բխող երաժշտական ելևէջները, որոնցից գոյանում են յուրատիպ մետրոռիթմական սկզբունքներով աչքի ընկնող պարզ հստակ մեղեդիները:Կոմիտասը մանրամասնորեն քննել է ժողովրդական գործիքային երաժշտությունը: Խոսելով համեմատաբար աղքատ հայ ժողովրդական գործիքային երաժշտության մասի, նա հանգամանորեն նկարագրել է շվին: Կոմիտասի երաժշտությունն ունկնդրին շլացնում է արտահայտիչ մեղեդայնությամբ և երևակայության հարստությամբ:Պարզ ու անպաճույճ են մեղեդիները, սակայն որքան գրավիչ թարմություն և ինքնատիպություն կա կոմիտասյան խմբերգերում ու մեներգերում:Բացառիկ աշխատունակությամբ օժտված բազմաշնորհ գեղարվեստագետը իր ստեղծագործական լայն թևերը տարածեց հայրենի երաժշտական մշակույթի բոլոր բնագավառների վրա:

Կոմիտասն իր ժողովրդի պանծալի զավակներից մեկն է և հազարավոր թելերով կապված է հայ մշակույթին:Նա մեր երաժշտության մեջ կանգնած է Արարատի նման բարձր ու վսեմ:

Մեծերը Կոմիտասի մասին.

'Հանճարեղ հայր Կոմիտաս:Խոնարհվում եմ ձեր երաժշտական հանճարի առջև:Եթե Կոմիտասը միայն' Անտունի' գրեր , դա բավարար կլիներ , որպեսզի մեծ գեղանկարիչ համարվեր:Իմ կարծիքով Կոմիտասը հայտնություն է, ամենաուշագրավ երևույթը

երաժշտական աշխարհում’:

Կլոդ Դեբյուսի

‘Կոմիտասը ծնվել է հայկական հողում և մեծացել իր ժողովրդի հանճարով:Կոմիտասի ստեղծածը Հայաստանի հպարտությունն է, նրա արվեստը:Սակայն, ինչպես ցանկացած ուշագրավ երևույթ ,Կոմիտասը ևս միայն իր ազգին չի պատկանում:Նա բոլոր ազգերին է պատկանում, մեր դարաշրջանին’:

Դմիտրի Կաբալևսկի

‘Մեր երաժշտական լեզվի համար Կոմիտասն արեց նույնը, ինչ դարեր առաջ Մաշտոցն արեց մեր խոսակցական լեզվի համար:Մեր լեզուն կար Մաշտոցից առաջ, ինչպես որ երաժշտությունն էլ՝ Կոմիտասից առաջ:Բայց ինչպես Մաշտոցը գտավ մեր լեզվի բաղադրիչները, նրա հնչյունակազմը և դա արձանագրեց այբուբենով,ճիշտ այսպես էլ Կոմիտասը գտավ մեր երաժշտության հնչյունակազմը մեկ այլ յուրատեսակ այբուբենով:Երկուսի արածն էլ գործ չէր, որ կոչենք մեծ կամ փոքր: Երկուսի արածն էլ գյուտ էր, իսկ գյուտը փոքր չի լինում:’

Պարույր Սևակ

‘Վերին աստիճանի սրամիտ, կենսուրախ և պատրաստաբան էր Կոմիտաս և սիրված ճեմարանի մեծեն ու փոքրեն:Կոմիտաս բացառիկ դուրեկան ձայն մը ուներ և արժանացած էր Խրիմյան Հայրիկի մասնավոր համակրանքին, նրա կարգադրությամբ, տոնական օրերը, Կոմիտասը կղեկավարեր դպրացի դասը և պատասխանատու էր խորանեն երգված սաղմոսերգություններու և ավետարաններու ընթերցման:

‘Կոմիտաս բծախնդիր էր մաքրության: Անոր թխորակ դեմքը, սեփ սև մազերը մաքրության մեջ միշտ կփայլեին:Մեծ խնամք կտաներ իր հագուստներուն մաքրությանը’:

‘Միշտ կըսեր, որ ժողովրդական բանահյուսությունը իր հոգվույն մեջ զուգընթաց էր ժողովրդական երաժշտության հետ: Եվ կավելցներ վստահ շեշտով մը. ‘Ես պիտի հասնեմ իմ բուն նպատակին և մեր հայ ժողովրդական երաժշտության գանձերը դուրս պիտի բերեմ հայրենի ավերակներեն...’:

Հրաչյա Աճառյան

‘Կոմիտասը մեծ ժողովրդի մեծագույն կոմպոզիտորն է, մեր երաժշտության հոգևոր հայրը:Եվ ամեն մի հայ երաժիշտ պետք է խորն ուսումնասիրի Կոմիտասի երգը,որպեսզի չկտրվի մեր ժողովրդի երաժշտության ակունքներից’:

Արամ Խաչատրյան

‘Ես Կոմիտասին համարում եմ հայկական երաժշտության հավերժական խորհրդանիշ, իսկ նրա ստեղծագործությունը՝ մեծագույն օրինակ և աղբյուր, որից ներշնչանք կստանան հետագա հայ բոլոր կոմպոզիտորները:Ինձ հատկապես հոգեհարազատ է լակոնիկությունը, պարզությունը , պարկեշտությունը երաժշտության մեջ և երաժշտական միջոցների խնայումը’:

Առնո Բաբաջանյան

‘Ես զարմանում եմ, որ քսանհինգ տարի սրանից առաջ փոքրիկ Հայաստանը տվել է մի Կոմիտաս, որի ստեղծագործություններն իրենց գեղարվեստական կառուցվածքի և արժեքի տեսակետից հազիվ կարելի կլիներ սպասել Ռուսաստանի խոշոր կենտրոններում ապրող նույն ժամանակի ամենահայտնի ռուս կոմպոզիտորներից’:

Միխայել Գնեսին

Դու՝ խազերի մեր քերական,
Դու՝ հոգևոր մեր շարական.

Դու՝ սրբազան մի ավազան,

Որ մեր հոգին ախտահանեց.

Դու՝ բիբլիական մի գավազան,

Որ ուր դիպավ՝ աղբյուր հանեց.

Դու մեր կարոտ ու մեր մորմոք,

Մեր տաղի քուրմ,

Մեր խաղի մոգ,

Մեր մշտահունչ ու մշտարթուն,

Անլռելի զաանգակատուն...

Եզրակացություն՝

Անժխտելի է այն փաստը,որ Կոմիտասը կործանումից և մոռացությունից փրկեց մոտ 3000 գեղջկական երգեր, չնայած՝ դրանցից մեզ հասել է 1800-ը:Կոմիտասն իր երաժշտամանկավարժական հայացքներում հավատարիմ է մնում երգի, երգեցողության ու պարի փոխկապակցման միջոցով մանուկներին բարոյակրթելու անհատի մեջ ազգայինը սերմանելու , նրա մտավոր ու ֆիզիկական ճիշտ զարգացման հարցադրումներին, որոնց պատասխաններն էլ փորձում է գտնել:Երգի և երաժշտության կարևորության գիտակցական հիմքերը պետք է դրվեն դեռևս դպրոցում՝ սկսած տարրական դասարաններից: Կոմիտաս վարդապետը մեզ ավանդել է ժողովրդական ազգային երգն ու երաժշտությունը: Կոմիտաս վարդապետի մանկավարժական հայացքները՝ ուղղված մատաղ սերունդների կրթության, դպրոցական ուսուցման, դաստիարակության սխալների, թերությունների, ազգային մտածելակերպի ու ազգային դաստիարակության խնդիրներին, կենսունակ են և հրատապ բոլոր ժամանակներում: Պետք է իրապես արժևորել մեծ կոմպոզիտորի մանկավարժական հարցադրումները, որոնք այսօր էլ հստակ պատասխան են փնտրում և որոնց լուծման ճանապարհին Կոմիտասի դիտարկումները կարող են լինել ուղենիշ, դառնալ կրթության ու դպրոցի զարգացման արդյունավետ ուղիների մշակման բանալին:

Գրականության ցանկ՝

«Հայ երաժշտության պատմություն»-Մ.Հարությունյան,Ա.Բարսամյան

«Կոմիտաս»-Ռ.Թերլեմեզյան

«Անլռելի զանգակատուն»-Պ.Սևակ

Ա.դո նամակ Երևանից,«Մշակ»1903թ.96

«Նոր-Դար»,1903,թիվ110

«Ով ով է:Հայեր»հանրագիտարան,հատոր1,գլխ.խմբ.Հովհ.Այվազյան2007,էջ569-570

Մարգարիտ Բաբայան-երգչուհի,դաշնակահարուհի,Կոմիտասի բարեկամներից մեկը:

Կոմիտաս-հոդվածներ և ուսումնասիրություններ,Երևան1941,էջ24